ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
«ԼՈՒՍԱԲԱՑ» Մ/ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ

<<Ք.Չարենցավան 5 թաղամաս

հեռ. /0226/ 4-18-51

**<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ - 11/2>> ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի
հնարավոր մասնակիցների ղեկավարներին**

N51
03 դեկտեմբերի 2014թ.

Հարգելի՛ Մասնակից,

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2>> ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Չարենցավան համայնքի <<Լուսաբաց>> մ/մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքներ:

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում <<ՁՔ-ԼՄՄՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/1>>:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք. Չարենցավան, 5-րդ թաղամաս 2-րդ փողոց թիվ 9 հասցեով, մինչև 2014թ. դեկտեմբերի 15-ը, ժամը 10^{00}-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է գրանցամատյանի վարման պատասխանատու Վ. Գալստյանը: Հայտերը գրանցամատյանի վարման պատասխանատուի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն Չարենցավան համայնքի <<Լուսաբաց>> մ/մանկապարտեզ ՀՈԱԿ-ի շենքում, ք. Չարենցավան, 5-րդ թաղամաս 2-րդ փողոց թիվ 9 հասցեով, 2014 թվականի դեկտեմբերի 15-ին, ժամը 10^{00}-ին:

Գնման առարկա է հանդիսանում Չարենցավան համայնքի <<Լուսաբաց>> մ/մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կարիքների համար՝ սննդամթերքի ձեռքբերումը:

Չարենցավան համայնքի <<Լուսաբաց>> մ/մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կարիքների համար՝ սննդամթերքի մատակարարման (որոնք կազմված են՝ 1-52 չափաբաժիններից) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N 3 Հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N 1), ընդ որում, պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված N 2): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Չարենցավան համայնքի <<Լուսաբաց>> մ/մանկապարտեզ ՀՈԱԿ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ gnumnerlusavan@mail.ru:

Գնումն իրականացվում է <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված կարգով:

Հարգանքներով՝

ՏՆՕՐԵՆ **Ժ. ՆԱՂԴԱԼՅԱՆ**

Հավելված N 1
<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2>> ծածկագրով
ընթացակարգի հրավերի
<<ՁՔ-ԼՄՄՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/1>> ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ
Դ Ի Մ Ո Ւ Մ

_____-ն հայտնում է, որ ցանկություն
(Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը))
ունի մասնակցելու Չարենցավան համայնքի <<Լուսաբաց>> մ/մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կողմից <<ՁՔ-ԼՄՄՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/1>> ծածկագրով հայտարարված ընթացակարգի N .... չափաբաժնին (չափաբաժիններին) և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

_____-ն հայտնում և հավաստում է,
(Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը))
որ իր հիմնադրի կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,
2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

_____-ն հայտնում և հավաստում է,
(Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը))
որ չունի գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

_____-ի էլեկտրոնային փոստի
(Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը))
հասցեն է՝ _____:
(Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե)

_____ _____
(Մասնակցի անվանումը (անունը), ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ.Տ

<<_____>>_____ 20___թ.

Հավելված N 2
<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2>> ծածկագրով
ընթացակարգի հրավերի
<<ՁՔ-ԼՄՄՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/1>> ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ԳՆԻ ԱՌԱՋԱՐԿ

ՈՒսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված <<ՁՔ-ԼՄՄՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/1>> ծածկագրով ընթացակարգի հրավերը (ծանուցումը), այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, _____-ն
(Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը))
առաջարկում է պայմանագիրը կատարել համաձայն հետևյալ գների՝

(ՀՀ դրամ)

Հ/հ	**Գնման առարկայի անվանումը**	**Արժեք***	**ԱԱՀ****	**Պայմանագրի կատարման համար առաջարկված գինը (տառերով և թվերով)**
1	***2***	***3***	***4***	***5=3+4***
1	**<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N 1>>**			
2	**<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N 2>>**			
3	**<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N 3>>**			
...	**...**			
...	**...**			

*** 3-րդ սյունակում նշված <<Արժեքը>> ներառում է ինքնարժեքը և շահույթը:**

****Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:**

***** Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> թիվ 168-Ն որոշման 56-րդ կետի համաձայն՝ եթե պայմանագրի գինը կայուն է, ապա մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գումարով:**

_____ _____
(Մասնակցի անվանումը (անունը), ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ.Տ

<<_____>>_____ 20___թ.

Հավելված N 3
<<ՁՔ-ԼՄՄՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/1>> ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հրավերի

ՆԱԽԱԳԻԾ

ՁԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ <<ԼՈՒՍԱԲԱՑ>> Մ/ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ 2015 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՁՔ-ԼՄՄՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/1

ք. Ձարենցավան <<_____>>_____ 20___թ.

_____-ը, ի դեմս տնօրեն _____-ի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և _____-ն, ի դեմս տնօրեն _____-ի (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով և Գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (Հավելված N 2) Պատվիրատուին մատակարարել սույն Պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված **սննդամթերք** (այսուհետ՝ Ապրանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար Վճարման ժամանակացույցով նախատեսված կարգով (Հավելված N 3):

2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Պատվիրատուին՝ **Պատվիրատուի կողմից նշված հասցով**:

2.2 Ապրանքը մատակարարվում է սույն Պայմանագրի N 2 Հավելվածով սահմանված Գնման ժամանակացույցին համապատասխան և ժամկետը սահմանվում է առնվազն երեսուն աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ Վաճառողը համաձայնում է Պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

2.3 Օրեկան պատվերը տրվում է նախորդող օրվա մինչև ժամը 15^{00}-ն, իսկ շաբաթական պատվերը՝ նախորդ շաբաթվա մինչև 5-րդ աշխատանքային օրը: Ընդ որում, օրեկան պատվերի դեպքում մատակարարումն իրականացվում է մինչև տվյալ օրվա ժամը 09^{00}-ն, շաբաթական մատակարարումը՝ մինչև տվյալ շաբաթվա 1-ին աշխատանքային օրվա ժամը 09^{00}:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **1 (մեկ) օրացուցային օրից ավելի:**

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի

համար վճարված գումարը:

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը.

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու սույն Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում սույն Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով:

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Պատվիրատուն Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **1 (մեկ) օրացուցային օրից ավելի:**

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանոտու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Պատվիրատուից պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը:

3.3.2 Պատվիրատուից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Պատվիրատուի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Պատվիրատուից պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Պատվիրատուն էականորեն խախտել է Պայմանագիրը:

3.3.4.1 Պատվիրատուի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Պատվիրատուի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Պատվիրատուին հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Սույն Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Պատվիրատուին մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն Պայմանագրի 3.1.2 բ) և 3.1.5 կետերին համապատասխան՝ Պատվիրատուի կողմից սահմանված ժամկտներում:

3.4.4 Պատվիրատուին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Պատվիրատուին հանձնել Պայմանագրի N 1 և N 2 Հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Պատվիրատուի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Պատվիրատուի կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Պատվիրատուին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Պատվիրատուին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Սույն Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ _____ (_____) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի Վճարման ժամանակացույցով (Հավելված N 3)

նախատեսված եռամսյակում, (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում) բայց ոչ ավելի, քան նույն Հավելվածով՝ Վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար Վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը սույն կետի պայմաններով իրականացվում են այն եռամսյակում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2015 թվականի դեկտեմբերի 25-ը:

4.3 Պայմանագրով ձեռք բերվող Ապրանքի դիմաց վճարումները կկատարվեն Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն ֆինանսական պարտավորություններ ստանձնելու օրվան հաջորդող օրվանից սկսած՝ կնքելով լրացուցիչ համաձայնագիր, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Պատվիրատուին՝ Պայմանագրի N 2 Հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Վաճառողն՝ Ապրանքի հանձնման ավարտից երկու աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 4):

6.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.4 Ապրանքը Պատվիրատուի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնված Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ Պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ Համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

9.6 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի (Վաճառող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասներն են:

Պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.7 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը.

2) Պայմանագրով նախատեսված ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

9.8 Պայմանագիրը կնքվում է ընդհանուր՝ _____ (_____) ՀՀ դրամ արժեքով, պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն կետի համաձայն Պայմանագիրը լուծարվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում Պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:

9.9 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.10 Պայմանագիրը կազմված է __(__) էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի NN 1, 2, 3 և 4 Հավելվածները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.11 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ՎԱՃԱՌՈՂ
_____	_____
_____	_____
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
<<___>>_____201_թ. կնքված
N <<ՀՔ-ԼՄՄՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/1>> գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Զարենցավան համայնքի <<Լուսաբաց>> մ/մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի գնման

Հ/հ	Ապրանքախմբի անվանումը	Ապրանքատեսակի նկարագիրը	Ապրանքատեսակի տեխնիկական բնութագիրը, համառոտ նկարագրությունը
1	Հավի ձու	ձու, 01 կարգ	Ձու սեղանի, 1-ին կարգի, տեսակավորված ըստ մեկ ձվի զանգվածի, սեղանի ձվինը՝ 25 օր, սառնարանային պայմաններում՝ 120 օր: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 %: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 29-ի «Ձվի և ձվամթերքի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1438-Ն որոշմանը և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
2	Բրինձ	բրինձ	Սպիտակ, խոշոր, բարձր, երկար տեսակի, չկոտրած, լայնությունից բաժանվում են 1-ից մինչև 4 տիպերի, ըստ տիպերի խոնավությունը 13%-ից մինչև 15%: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառ. 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված , Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի" և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
3	Ոսպ	ոսպ, ամբողջական	Երեք տեսակի, համասեռ, մաքուր, չոր՝ խոնավությունը՝ (14,0-17,0) % ոչ ավելի: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
4	Հնդկաձավար	հնդկաձավար	Հնդկաձավար I տեսակի, խոնավությունը՝ 14,0 %-ից ոչ ավելի, հատիկները՝ 97,5 %-ից ոչ պակաս: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 70 %: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված «Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
5	Հաճարաձավար	հաճարաձավար	Ստացված հաճարի հատիկներից, հատիկներով խոնավությունը 15 %-ից ոչ ավելի, փաթեթավորումը՝ մինչև 50կգ և ոչ ավելի պարկերով: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված «Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
6	Ձավար		Ձավար (հարիսա և սպաս պատրաստելու համար նախատեսված), պատրաստված բարձր և առաջին տեսակի ցորենից, ԳՕՍՏ 276-60: Անվտանգությունը՝ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
7	Մակարոնեղեն	մակարոն	Մակարոնեղեն անդրոժ խմորից, կախված ալյուրի տեսակից և որակից՝ Б (փափուկ ապակենման ցորենի ալյուրից), չափածրարված և առանց չափածրարման: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի

			անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
8	Տավարի միս	տավարի միս, տեղական փափուկ	Միս տավարի պաղեցրած, փափուկ միս առանց ոսկորի, զարգացած մկաններով, պահված 0 ℃ -ից մինչև 4 ℃ ջերմաստիճանի պայմաններում՝ 6 ժ-ից ոչ ավելի, I պարարտության, պաղեցրած մսի մակերեսը չպետք է լինի խոնավ, ոսկորի և մսի հարաբերակցությունը՝ համապատասխանաբար 0 % և 100 %: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված «Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
9	Հավի միս	հավի մսեղիք, սառեցված, տեղական, ամբողջական	Բրոյլեռ տիպի, առանց փորոտիքի, մաքուր, արյունազրկված, առանց կողմնակի հոտերի, փաթեթավորված պոլիէթիլենային թաղանթներով: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված «Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
10	Մսի պահածո		Պահածոներ տավարի մսի բարձր տեսակի, հերմետիկ փակ մետաղական տարաներով, ԳՕՍՏ 5284-84 կամ համարժեք: Մսի և ճարպի զանգվածային մասը ոչ պակաս 54%-ից, այդ թվում՝ ճարպի զանգվածային մասը ոչ ավելի 17%-ից, քլորիդների զանգվածային մասը 1,2-1,5%: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված <<Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի>> և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
11	Երշիկ		Երշիկ, բժշկական՝ պատրաստված տավարի և խոզի մսերից, ըստ ԳՕՍՏ 23670-79 կամ արտադրողի տեխնիկական պայմանների, խոնավությունը ոչ ավելի քան 68%, փաթեթավորած վակուումային կամ առանց, յուրաքանչյուր փաթեթավորման միավորը համապատասխան պիտակավորմամբ: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված «Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
12	Նրբերշիկ		Բարձր տեսակի, պատրաստված տավարի և խոզի կամ տավարի և հորթի մսերից: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված <<Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի>> և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
13	Կարագ	կարագ, սերուցքային, զելանդական արտադրության կամ համարժեք	Սերուցքային, յուղայնությունը՝71,5-82,5%, բարձր որակի, թարմ վիճակում, պրոտեինի պարունակությունը 0,7 գ, ածխաջուր 0,7 գ, 740 կկալ 200-250 գ կամ 20-25 կգ գործարանային փաթեթներով: Անվտանգությունը և մակնշումը՝ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդված
14	Կարագ	կարագ, սերուցքային	Սերուցքային, յուղայնությունը՝71,5-82,5%, բարձր որակի, թարմ վիճակում, պրոտեինի պարունակությունը 0,7 գ, ածխաջուր 0,7 գ, 740 կկալ 200-250 գ կամ 20-25 կգ գործարանային փաթեթներով: Անվտանգությունը և մակնշումը՝ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության

			մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդված
15	Պանիր	պանիր, լոռի	Պանիր պինդ, կովի կաթից, աղաջրային, սպիտակից մինչև բաց դեղին գույնի, տարբեր մեծության և ձևի աչքերով: 46 % յուղայնությամբ, պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 90%: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջ-ների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
16	Թթվասեր	թթվասեր, տեղական	Թարմ կովի կաթից, յուղայնությունը՝ 20 %-ից ոչ պակաս, թթվայնությունը՝ 65-100 0Т, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 %
17	Կաթնաշոռ	կաթնաշոռ դասական	Կաթնաշոռ 18 և 9,0% յուղի պարունակությամբ, թթվայնությունը՝ 210-240 ^{0}Т, փաթեթավորված սպառողական տարաներով, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
18	Կաթ	կաթ, պաստերացված	Պաստերացված կովի կաթ 3 % յուղայնությամբ, թթվայնությունը՝ 16-210Т: Անվտանգությունը և մակնշումը՝ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի
19	Խտացրած կաթ	խտացրած կաթ շաքարով	Խտացրած կաթ շաքարով, խոնավությունը՝ 26,5 %-ից ոչ ավելի, սախարոզը 43,5 %-ից ոչ պակաս, կաթնային չոր նյութերի զանգվածային մասը՝ 28,5 %-ից ոչ պակաս, թթվայնությունը՝ 48 0 Т-ից ոչ ավելի, պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահից ոչ պակաս քան 70 %: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
20	Մածուն	մածուն, կովի կաթից	Թարմ կովի կաթից, յուղայնությունը 3%-ից ոչ պակաս, թթվայնությունը 65-1000Т,: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
21	Բուսական յուղ, ձեթ	արևածաղկի ձեթ, ռաֆինացված, (զտած)	Պատրաստված արևածաղկի սերմերի լուծամզման և ճզմման եղանակով, բարձր տեսակի, զտված, հոտազերծված: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
22	Ալյուր ցորենի	բարձր տեսակի ցորենի ալյուր	Ցորենի ալյուրին բնորոշ, առանց կողմնակի համի և հոտի: Առանց թթվության և դառնության, առանց փտահոտի ու բորբոսի: Խոնավության զանգվածային մասը՝ ոչ ավելի 15 %-ից, մետաղամագնիսական խառնուրդները՝ ոչ ավելի 3,0%-ից, մոխրի զանգվածային մասը՝ չոր նյութի 0.55%, հում սոսնձանյութի քանակությունը՝ առնվազն 28,0%: ՀՍՏ

			280-2007: Անվտանգությունը և մակնշումը N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
23	Տոմատի մածուկ	տոմատի մածուկ	Բարձր տեսակների, ապակե տարաներով, փաթեթավորումը՝ մինչև 10 դմ^3 տարողությամբ: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
24	Ջեմ	ջեմ, տեղական	Ջեմ՝ տարբեր մրգերի, 1-ին տեսակի: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
25	Շաքարավազ	շաքարավազ սպիտակ	Սպիտակ գույնի, սորուն, քաղցր, առանց կողմնակի համի և հոտի (ինչպես չոր վիճակում, այնպես էլ լուծույթում): Շաքարի լուծույթը պետք է լինի թափանցիկ, առանց չլուծված նստվածքի և կողմնակի խառնուկների, սախարոզի զանգվածային մասը՝ 99,75%-ից ոչ պակաս (չոր նյութի վրա հաշված), խոնավության զանգվածային մասը՝ 0,14%-ից ոչ ավել, ֆեռոխառնուկների զանգվածային մասը՝ 0,0003%-ից ոչ ավել, պիտանելիության մնացորդային ժամկետը՝ մատակարարման պահին սահմանված ժամկետի 50%-ից ոչ պակաս: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
26	Թեյ	թեյ, սև	Բայխաթեյ սև չափածրարված և առանց, խոշոր տերևներով, հատիկավորված և մանր: Միանգամյա օգտագործման թեյի տոպրակները տեսակավորված են 2, 2,5 և 3 գ փաթեթներով: «Փունջ», բարձրորակ և I տեսակների: Անվտանգությունը՝ ըստ 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
27	Աղ	աղ, կերակրի, մանր	Կերակրի աղ՝ բարձր տեսակի, յոդացված ՀՍՏ 239-2005 Պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 12 ամիս
28	Դափնետերև	դափնետերև, չորացրած	Չորացրած դափնետերև, խոնավության զանգվածային մասը տերևում՝ 12 %-ից ոչ ավելի: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
29	Կակաոյի փոշի		Խոնավությունը՝ 6,0 %-ից ոչ ավելի, pH-ը՝ 7,1-ից ոչ ավելի, դիսպերսությունը՝ 90,0 %-ից ոչ պակաս, փաթեթավորված թղթե տուփերում և մետաղյա կամ ապակյա բանկաներում, ինչպես նաև ոչ կշռաբաժանված: Անվտանգությունն ըստ <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
30	Պղպեղ	պղպեղ, սև	Համեմունք աղացած, խոնավությունը՝ 12 %-ից ոչ ավելի, եթերային յուղերը՝ 0,8 %-ից ոչ պակաս, մոխրի առկայությունը՝ 5-6 %: Անվտանգությունն ըստ <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
31	Պղպեղ	պղպեղ, կարմիր	Համեմունք աղացած, խոնավությունը՝ 12 %-ից ոչ ավելի, եթերային յուղերը՝ 0,8 %-ից ոչ պակաս, մոխրի առկայությունը՝ 5-6 %: Անվտանգությունն ըստ <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
32	Հալվա		Սպիտակ, քունջութի, ուկրաինական արտադրության կամ համարժեքը: Անվտանգությունն ըստ <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
33	Վաֆլի		Չափածրարված կամ առանց չափածրարման: Անվտանգությունն ըստ <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի

34	Քաղցր թխվածքաբլիթ-ներ		Կաթնահունց, շաքարահունց և երկարատև պատրաստված, խոնավությունը՝ 3 %-ից մինչև 10 %, շաքարի զանգվածային մասը՝ 20 %-ից մինչև 27 %, յուղայնությունը՝ 3 %-ից մինչև 30 %, ԳՕՍ 24901-89: Անվտանգությունն ըստ <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
35	Թխվածքաբլիթ	ջեմով ռուլետներ	Անվտանգությունն ըստ <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
36	Կոնֆետեղեն	կոնֆետ, շոկոլադապատ	Ըստ սահմանված բնութագրի: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
37	Կոնֆետեղեն	կոնֆետ, կարամել	Կարամել կաթնային, պոմադային, մրգային, դոնդողային, դոնդողամրգային, նշակարկանդային, գրիլյաժային, պրալինե հավելանյութերով: Կախված կոնֆետի տեսակից խոնավության զանգվածային մասը՝ 4-25 %-ից ոչ ավել, փաթեթավորումը՝ նրբաթիթեղի և թղթի մեջ, խառը տեսականիով: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
38	Շոկոլադե սալիկներ		Թարմ, անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
39	Մրգային մարմելադ		Մրգային մարմելադ: Անվտանգությունը և մակնշումը՝ <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
40	Մրգային մածուկներ	կիսել	Մրգային, թարմ: Անվտանգությունը և մակնշումը՝ <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
41	Չամիչ		Չոր մրգեր առանց կորիզի (չամիչ), առանց չափածրարման, պահված 5 ^{0}C-ից մինչև 20 ^{0}C ջերմաստիճանում, 70 %-ից ոչ ավելի խոնավության պայմաններում: Անվտանգությունը և մակնշումը՝ <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
42	Կարտոֆիլ	կարտոֆիլ	ՈՒշահաս, I տեսակի, չցրտահարված, առանց վնասվածքների, կլոր ձվաձև (4-ից 5) սմ 20%: Տեսականու մաքրությունը՝ 90 %-ից ոչ պակաս, փաթեթավորումը՝ առանց չափածրարման: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
43	Սոխ	սոխ, գլուխ	Թարմ, կծու, ընտիր տեսակի, նեղ մասի տրամագիծը 3 սմ-ից ոչ պակաս, ԳՕՍ 27166-86, անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված, Թարմ պտուղբանջարեղենի տեխնիկական կանոնակարգի և Սննդամթերքի անվտանգության մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
44	Կաղամբ	կաղամբ, մաքրած	Թարմ գլուխ կաղամբ՝ մանրածախ առևտրի ցանց և հանրային սննդի օբյեկտներ մատակարարման և իրացման համար: Թարմ գլուխ կաղամբն ըստ հասունացման ժամկետների ստորաբաժանվում է հետևյալ տեսակների, վաղահաս, միջահաս և ուշահաս: Արտաքինտեսքը՝ գլուխները թարմ, ամբողջական, մաքուր,առողջ, լիովին ձևավորված, առանց հիվանդությունների, չծլած, տվյալ բուսաբանական տեսակին բնորոշ գույնով. ձևով ու համ ու հոտով, առանց կողմնակի հոտի և համի: Կաղամբի գլուխները չպետք է լինեն գյուղատնտեսական վնասատուներով վնասված, չպետք է ունենան ավելորդ արտաքին խոնավություն, պետք է լինեն խիտ կամ քիչ խիտ, բայց ոչ փխրուն, վաղահաս կաղամբը՝ տարբեր աստիճանի փխրունությամբ: Գլուխների մաքրման աստիճանը՝

			կաղամբի գլուխները պետք է մաքրված լինեն մինչև մակերևույթը ամուր գրկող կանաչ և սպիտակ տերևները: Վաղահաս կաղամբի գլուխները պետք է մաքրված լինեն վարդաձև տերևաբույլերից և օգտագործման համար ոչ պիտանի տերևներից: Կաղամբակոթի երկարությունը 3սմ-ից ոչ ավելի: Կաղամբի մաքրված գլուխների քաշը ոչ պակաս՝ 0.8 կգ, վաղահաս կաղամբինը՝ 0.3- 0.4 կգ: Ճաքած և 3 սմ-ից ոչ ավելի խորությամբ, մեխանիկական վնասվածքներով կաղամբի գլուխների զանգվածային մասը՝ 5%-ից ոչ ավելի: 3 սմ-ից ավելի խորությամբ մեխանիկական վնասվածքներով, ճաքերով, նեխած, գյուղատնտեսական վնասատուներով վնասված, ցրտահարված, շոգեհարված՝ միջուկի դեղնվածության և կարմրածության նշաններով գլուխների առկայություն չի թույլատրվում: Չի թույլատրվում նշահատված գլուխներով և կաղամբակոթերով կաղամբի առկայություն: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀօրենքի 8-րդ հոդվածի
45	Գազար	գազար	Ընտիր տեսակի: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
46	Ճակնդեղ	ճակնդեղ, արմատապտուղ	Արտաքին տեսքը՝ արմատապտուղները թարմ, ամբողջական, առանց հիվանդությունների, չոր, չկեղտոտված, առանց ճաքերի և վնասվածքների: Ներքին կառուցվածքը՝ միջուկը հյութալի, մուգ կարմիր՝ տարբեր երանգների: Արմատապտուղների չափերը (ամենամեծ լայնակի տրամագծով) 5-14սմ: Թույլատրվում է շեղումներ նշված չափերից և մեխանիկական վնասվածքներով 3 մմ ավել խորությամբ՝ ընդհանուր քանակի 5%-ից ոչ ավելի: Արմատապտուղներին կպած հողի քանակությունը ոչ ավել քան ընդհանուր քանակի 1%
47	Կանաչի	կանաչի, խառը	Կանաչի տարբեր տեսակի, անվտանգությունը՝ ըստ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի
48	Վարունգ	վարունգ	Վարունգ թարմ, օգտագործման տեսակի, անվտանգությունը՝ ըստ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի
49	Լոլիկ	լոլիկ	Լոլիկ թարմ օգտագործման տեսակի, անվտանգությունը՝ ըստ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի
50	Խնձոր	խնձոր, միջին չափի	Խնձոր թարմ, պտղաբանական I խմբի, Հայաստանի տարբեր տեսակների, նեղ տրամագիծը 5 սմ-ից ոչ պակաս, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
51	Կիտրոն		Կիտրոն, բարձր որակի: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված <<Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի>> և <<Սննդամթերքի անվտանգության

			մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
52	Հաց	հաց, հրազդան	Ցորենի 1-ին տեսակի ալյուրից պատրաստված: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 %: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

_____

_____

_____

(ստորագրություն)

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

_____

_____

_____

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված N 2
<<___>>_____201_թ. կնքված
N <<ՀՔ-ԼՄՄՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/1>> գնման պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Զարենցավան համայնքի <<Լուսաբաց>> մ/մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի գնման

Հ/հ	Ապրանքատեսակի անվանումը	Նախատեսվում է գնել 2015 թվականի ընթացքում, ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, ընդ որում՝			Ընդամենը	
		Չափի միավորը	Միավորի գինը, ՀՀ դրամ	1-ին եռամսյակ	Քանակը	Գումարը (ՀՀ դրամ)
1	Հավի ձու	հատ			**150**	
2	Բրինձ	կգ			**20**	
3	Ոսպ	կգ			**5**	
4	Հնդկաձավար	կգ			**8**	
5	Հաճարաձավար	կգ			**4**	
6	Ձավար	կգ			**5**	
7	Մակարոնեղեն	կգ			**8**	
8	Տավարի միս	կգ			**20**	
9	Հավի միս	կգ			**20**	
10	Մսի պահածո	կգ			**4**	
11	Երշիկ	կգ			**4**	
12	Նրբերշիկ	կգ			**3**	
13	Կարագ	կգ			**5**	
14	Կարագ	կգ			**8**	
15	Պանիր	կգ			**5**	
16	Թթվասեր	կգ			**8**	
17	Կաթնաշոռ	կգ			**5**	
18	Կաթ	լիտր			**10**	
19	Խտացրած կաթ	կգ			**5**	
20	Մածուն	լիտր			**30**	
21	Բուսական յուղ, ձեթ	լիտր			**8**	
22	Այլուր ցորենի	կգ			**5**	
23	Տոմատի մածուկ	կգ			**3**	
24	Ջեմ	կգ			**7**	
25	Շաքարավազ	կգ			**25**	
26	Թեյ	կգ			**0,5**	
27	Աղ	կգ			**1**	
28	Դափնետերև	կգ			**0,1**	
29	Կակաոյի փոշի	կգ			**0,1**	
30	Պղպեղ	կգ			**0,1**	
31	Պղպեղ	կգ			**0,1**	
32	Հալվա	կգ			**3**	
33	Վաֆլի	կգ			**4**	
34	Քաղցր թխվածքաբլիթներ	կգ			**10**	

35	Թխվածքաբլիթ	տուփ			**10**	
36	Կոնֆետեղեն	կգ			**3**	
37	Կոնֆետեղեն	կգ			**2**	
38	Շոկոլադե սալիկներ	հատ			**30**	
39	Մրգային մարմելադ	կգ			**2**	
40	Մրգային մածուկներ	կգ			**4**	
41	Չամիչ	կգ			**0,5**	
42	Կարտոֆիլ	կգ			**100**	
43	Սոխ	կգ			**8**	
44	Կաղամբ	կգ			**30**	
45	Գազար	կգ			**5**	
46	Ճակնդեղ	կգ			**3**	
47	Կանաչի	կապ			**10**	
48	Վարունգ	կգ			**10**	
49	Լոլիկ	կգ			**10**	
50	Խնձոր	կգ			**20**	
51	Կիտրոն	հատ			**5**	
52	Հաց	կգ			**200**	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

_____

_____

_____

(ստորագրություն)

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

_____

_____

_____

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված N 3
<<___>>_____201_թ. կնքված
N <<ՀՔ-ԼՄՄՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/1>> գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Զարենցավան համայնքի <<Լուսաբաց>> մ/մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի գնման

Ապրանքախմբի անվանումը	Ֆինանսավորման ժամկետը			
	Ֆինանսավորումը կատարվելու է 2015 թվականի պահպանման ծախսերի նախահաշվով նախատեսված գումարների սահմաններում 100 %, երկկողմ հանձնման – ընդունման արձանագրության հիման վրա (դրամ)			
	1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
Սննդամթերք	100 %	100 %	100 %	100 %

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ՎԱՃԱՌՈՂ
_____	_____
_____	_____
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 4
<<___>>_____201_թ. կնքված
N <<ՀՔ-ԼՄՄՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/1>> գնման պայմանագրի

Կատարող	**Պատվիրատու**
_____	_____
գտնվելու վայրը_____	**գտնվելու վայրը**_____
հհ_____	**հհ**_____
_____	_____
հվհհ_____	**հվհհ**_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N___

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<__>>_____201_թ.
Պայմանագրի անվանումը՝ <<_____>>
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<__>>_____201_թ.
Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն, ի դեմս տնօրեն _____-ի, և Կատարողը, ի դեմս _____-ի, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը <<__>>_____201_թ.-ից <<__>>_____201_թ.-ը ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները.

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշը	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակա-ցույցի)
Ընդամենը				

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում է սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	**Աշխատանքն ընդունեց**
_____	_____
(ստորագրություն)	**(ստորագրություն)**
_____	_____
(Ազգանուն, Անուն)	**(Ազգանուն, Անուն)**
Կ.Տ	**Կ.Տ**

Հավելված N 4
<<ՉՔ-ԼՄՄՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/1>> ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ N ՉՔ-ԼՄՄՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/1

ք. Չարենցավան <<____>> _____ _201_թ._

<<Մասնակցի անվանումը>>, ի դեմս Ընկերության տնօրեն՝ <<Ընկերության տնօրենի անուն ազգանունը>>, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է **Չարենցավան համայնքի <<Լուսաբաց>> մ/մանկապարտեզ ՀՈԱԿ-ի** (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ **<<Սննդամթերքի>>** ձեռքբերման **<<ՉՔ-ԼՄՄՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/1>>** ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին, պետք է ներկայացնի պայմանագրի ապահովում և ընթացակարգի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրով Ընկերության ստանձնած պարտավորությունների պատշաճ, ժամանակին և ամբողջ ծավալով կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը սահմանում է իր հետևյալ պատասխանատվությունը.

1.1.1 Պատվիրատուի կողմից կազմակերպված **<<Սննդամթերքի>>** ձեռքբերման N **<<ՉՔ-ԼՄՄՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/1>>** գնման պայմանագրից բխող պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումից խուսափելու կամ հրաժարվելու, ինչպես նաև գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, Ընկերությունը Պատվիրատուին վճարում է տուժանք՝ ----------թվերով---------- (----------տառերով----------) ՀՀ դրամի չափով:

1.1.2 Պատվիրատուն իրավունք ունի Ընկերության կողմից սույն համաձայնության 1.1.1 կետում նշված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում նշված գումարի գանձման պահանջ ներկայացնել Ընկերությանը, որն Ընկերությունը անվերապահորեն կկատարի նման պահանջ ստանալու օրվանից 5 բանկային օրվա ընթացքում:

1.1.3 Ընկերությունն իրավունք է վերապահում Պատվիրատուին, առանց նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով գանձել համապատասխան գումար, սույն համաձայնության 1.1.1 կետում նշված գումարի սահմաններում, Ընկերությանը սպասարկող <<Մասնակցի բանկի անվանումը>> կամ Ընկերությանը սպասարկող ցանկացած այլ բանկում բացված՝ Ընկերության ցանկացած հաշվից: Սույնով <<Մասնակցի անվանումը>>, հանձնարարում է <<Մասնակցի բանկի անվանումը>>-ին, ինչպես նաև իրեն սպասարկող բոլոր բանկերին, սույն համաձայնության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում **Չարենցավան համայնքի <<Լուսաբաց>> մ/մանկապարտեզ ՀՈԱԿ-ի** առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով տուժանքի մասին սույն համաձայնության հիման վրա Ընկերության բանկային հաշիվներից անակցեպտ (անվիճելի) կարգով գանձել պահանջվող գումարը:

2. Այլ պայմաններ

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է մինչև 20__թ. _____-ի ___-ը ներառյալ:

2.2 Սույն համաձայնությունը չի կարող վաղաժամկետ դադարել, Ընկերության կողմից հետ կանչվել, փոփոխվել կամ այլ կերպ դադարել առանց **Չարենցավան համայնքի <<Լուսաբաց>> մ/մանկապարտեզ ՀՈԱԿ-ի** գրավոր համաձայնության:

2.3 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները

_____
Մասնակցի անվանումը (անունը)

_____
(հասցեն)

_____
(բանկ)

Հ/Հ _____

ՀՎՀՀ _____

_____
(Մասնակցի ղեկավարի պաշտոնը, անուն ազգանուն)

_____
(ստորագրություն)

_____
(Մասնակցի գլխավոր հաշվապահի անուն ազգանուն)

_____
(ստորագրություն)

Կ.Տ.